ԵԶԴԻ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ. ԱՆՁՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԿՆԽՎԿ	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՊԳԾ	Պեկինի գործողությունների ծրագիր
ՏՍՄԻՄԴ	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ՔՀԿ-ներ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ՔՔԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է երկխոսության երեք հանդիպում Արարատի և Արագածոտնի մարզերում և Երևանում բնակվող եզդի ազգային փոքրամասնության 49 ներկայացուցիչների[i] հետ. արդյունքում վեր են հանվել եզդի աղջիկների և կանանց առջև ծառացած խնդիրներն ու մարտահրավերները:

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ամենամեծ ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդի համայնքը կազմում է ՀՀ բնակչության 1,08 տոկոսը[1]: Թեև այդ թիվը զգալի է, եզդիները շարունակում են թերներկայացված լինել քաղաքական և որոշումների կայացման գործընթացներում: Սեռով, էթնիկ պատկանելությամբ, մշակույթով, կրոնով, լեզվով և այլ անձնական հատկանիշներով կամ կարգավիճակով պայմանավորված՝ այս խնդիրն ավելի բարդ բնույթ է կրում: Եզդի կանանց ներկայացվածությունը քաղաքացիական և հասարակական կյանքում, որոշումների և քաղաքականության կայացման գործընթացներում ակնհայտորեն բացակայում է: Մարտահրավերները տարբեր են՝ կրթության հասանելիությունից մինչև վաղ ամուսնություններ, խտրականությունից՝ սահմանափակ հնարավորություններ, մշակույթի պահպանումից՝ մարդու իրավունքներ, որոնք էլ խոչընդոտում են եզդի աղջիկների և կանանց հզորացմանն ու ընդգրկմանը քաղաքականության և որոշումների կայացման գործընթացներում: Չնայած համայնքի կողմից արձանագրված որոշ դրական զարգացումներին, համակարգային խնդիրները զգալի են:

Սույն փաստաթուղթը մշակվել է երկխոսության հանդիպումների արդյունքների հիման վրա՝ նպատակ ունենալով աջակցել և նպաստել եզդի ազգային փոքրամասնության աղջիկների և կանանց արդյունավետ մասնակցությանը որոշումների կայացման գործընթացներում և խթանել նրանց լիազորությունները՝ ղեկավար դերեր ստանձնելու հարցում: Այն վերլուծում է հասարակական կյանքում եզդի աղջիկների և կանանց մասնակցությանն ու ներգրավվածությանն ուղղված քայլերի առաջընթացը և բացթողումները, ուսումնասիրում է համակարգային խնդիրները, սոցիալ-մշակութային նորմերի ազդեցությունը և անհատական կարողությունների զարգացման խոչընդոտները՝ եզդի աղջիկներին և կանանց հզորացնելու, որոշումների և քաղաքականության կայացման գործընթացներում նրանց ձայնը լսելի դարձնելու նպատակով և ներառում է համապարփակ առաջարկություններ՝ ուղղված նրանց առջև ծառացած մարտահրավերների դիմակայմանը: Առաջարկվող միջամտությունները զանազան են՝ եզդի աղջիկների և կանանց շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացումից մինչև իրավական համակարգի և քաղաքականության շրջանակների ամրապնդում՝ նպատակ ունենալով խթանել համայնքի կրթական մակարդակը, առաջնորդության հմտությունները, ներառել նրանց քաղաքացիական և հասարակական կյանքում:

---

[i] ՀՀ 2022թ. մարդահամարի ժամանակ ազգային կազմի վերաբերյալ հարցի պատասխանը հարցաթերթում նշվել է ըստ պատասխանողի ինքնորոշման և ցանկության: Երեխաների ազգությունը որոշվել է ծնողների կողմից: Եզդի տերմինն օգտագործվում է այն համայնքի համար, որն իրեն համարում է եզդի, https://www.armstat.am/am/?nid=82&id=2623:

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հայաստանը դրական քայլեր է կատարել կանանց քաղաքացիական մասնակցության և որոշումների կայացման մեջ ընդգրկվելու իրավունքը խթանելու ուղղությամբ: Արդյունավետ մասնակցությունը քաղաքացիական կյանքում, որոշումների կայացման և քաղաքականության ձևավորման մեջ հիմնարար իրավունք է, որը երաշխավորված է տարբեր իրավական փաստաթղթերով: Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և դաշնագրեր, որոնք վերաբերում են կանանց իրավունքներին, մասնավորապես, էթնիկ փոքրամասնությունների կանանց և աղջիկների իրավունքներին: Դրանք են՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (ԿՆԽՎԿ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՏՍՄԻՄԴ)[2]: Հայաստանը ստորագրել է նաև մեկ այլ ռազմավարական փաստաթուղթ՝ Պեկինի հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը (ՊԳԾ)[3], որն ընդունվել է 1995 թվականին Կանանց նվիրված չորրորդ համաշխարհային խորհրդաժողովում՝ պարտավորություն ստանձնելով մշակել և իրականացնել գենդերային հավասարության ազգային ռազմավարություններ և քաղաքականություններ: Բացի այդ, 2001 թվականից Հայաստանը հանդիսանում է ԵԽ անդամ երկիր[4], իսկ 2017 թվականին ստորագրվել է ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), որի նպատակն է գենդերային հավասարության ամրապնդումը, սեռի, ռասայի կամ էթնիկ ծագման պատճառով խտրականության դեմ պայքարը և կանանց համար հավասար հնարավորությունների ապահովումը[5]:

Ավելին, ՀՀ Սահմանադրությամբ[6] ամրագրված է կանանց և տղամարդկանց միջև հավասարության խթանումը (հոդված 86), ամուսնանալու ազատությունը (հոդված 35), կրթության իրավունքը (հոդված 38) և արգելված է խտրականությունը կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից (հոդված 29): Բացի այդ, «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծով առաջարկվում է սահմանել գենդերային հավասարության քաղաքականության ապահովման վեց գերակայություններ՝ կառավարման և որոշումների ընդունման մակարդակների, սոցիալ-տնտեսության և աշխատանքային, կրթության և գիտության, առողջապահության, գենդերային բռնության, կանանց/աղջիկների նկատմամբ և ընտանեկան բռնության կանխարգելման և կլիմայի ոլորտներում[7]: Այդ գերակայություններն ուղղված են խթանելու բարենպաստ միջավայրի ստեղծմանը, որտեղ պաշտպանված կլինեն կանանց, ներառյալ ազգային փոքրամասնությունների կանանց իրավունքները՝ նշված ոլորտներում հնարավորություններ ընձեռելով նրանց առաջխաղացմանը: Չնայած այն հանգամանքին, որ եզդիները որպես ՀՀ քաղաքացիներ ունեն հավասար մասնակցության և ներկայացվածության բոլոր իրավունքները, եզդի աղջիկներն ու կանայք գրեթե ներկայացված չեն որոշումներ կայացնող պաշտոններում, նրանք շարունակում են մարգինալացված մնալ քաղաքացիական և հասարակական կյանքից, չունեն ղեկավար դերեր և ներգրավված չեն քաղաքականության մշակման գործընթացներում՝ որակյալ կրթության անհասանելիության, ռեսուրսների անհամաչափ բաշխվածության, ինստիտուցիոնալ խոչընդոտների և խտրական դրսևորումների պատճառով: Հայաստանում եզդի աղջիկների և

կանանց իրավունքների լիարժեք իրացմանը խոչընդոտող մարտահրավերների հիմքում ընկած են գենդերային նորմերը, գենդերային դերերն ու կարծրատիպերը, որոնք առավել նկատելի են եզդիական համայնքում: Գենդերային պատկերացումներն ու կարծրատիպերը արմատացած ու կայուն են, յուրացվում են նույնիսկ այն խմբերի կողմից, որոնց նկատմամբ ձևավորվել են և դառնում են չգիտակցված գաղափարախոսություն, տարբեր ընտանիքներում դրանք տարբեր են՝ պայմանավորված կրոնական առանձնահատկություններով, կենսապայմաններով, տարիքով, կրթությամբ և հաճախ վերարտադրվում են համայնքի առաջնորդների, քաղաքականություն ձևավորողների և լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից: Ավելին, եզդիների շրջանում կրթության կարևոր դերը խթանող նախաձեռնությունների, կրթական և մասնագիտական հնարավորությունների մասին իրազեկվածության պակասը նպաստում են եզդի աղջիկների և կանանց մարգինալացմանը և ամրապնդում գենդերային անհավասարությունները նրանց՝ քաղաքացիական և հասարակական կյանքին մասնակցելու հարցում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Եզդիական համայնքի հետ երկխոսության հանդիպումների արդյունքում ակներև դարձավ քաղաքացիական կյանքում եզդի աղջիկների և կանանց մասնակցության ներկայիս իրավիճակը, վերահաստատվեց ղեկավար պաշտոններում նրանց մասնակցությունը խթանելու հրամայականը: Չնայած մի շարք միջազգային համաձայնագրերով և ազգային օրենսդրությամբ սահմանված է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, եզդի կանանց մասնակցությունը որոշում կայացնող մարմիններում էականորեն բացակայում է: Թեև դրական առաջընթաց է գրանցվում եզդի աղջիկների և կանանց իրավունքների, մասնավորապես՝ կրթության իրավունքի իրացման հարցում[8], այնուամենայնիվ, եզդիաբնակ համայնքներում առաջընթացը զգալիորեն տարբերվում է, ավելին, եզդի կանանց կրթության մակարդակի վերաբերյալ առկա վիճակագրությունը[ii] փաստում է, որ նրանց առաջնորդական դերը խթանելու հարցում խնդիրները բազմաթիվ են:

Եզդի աղջիկներն ու կանայք Հայաստանում բախվում են բազմաբնույթ մարտահրավերների, որոնք խոչընդոտում են նրանց լիարժեք մասնակցությանը սոցիալական, տնտեսական և քաղաքական ոլորտներում[9]: Այդ խոչընդոտների հիմքում ընկած են խտրական հասարակական նորմերն ու գենդերային կարծրատիպերը, որոնք ձևավորում են սոցիալական վերաբերմունքն ու պրակտիկաները՝ զրկելով նրանց առաջնորդության հնարավորություններից: Ավելին, ընտանեկան և ամուսնական պարտականությունները, տնային գործերի ծանրաբեռնվածությունը մեծապես ազդում են նրանց՝ քաղաքացիական գործունեություն ծավալելու հնարավորությունների վրա: Դպրոցում հաջողություններ ունեցող շատ աղջիկների վրա ճնշում է գործադրվում՝ հրաժարվելու իրենց երազանքներից և ձգտումներից՝ «հօգուտ ավանդույթների և սովորույթների»: Թերի կրթությունը և, հետևաբար, տնտեսական հնարավորությունների բացակայությունը խորացնում են սոցիալական բացասական նորմերի ազդեցությունը նրանց կյանքի վրա:

Երկխոսության հանդիպումների ընթացքում եզդիական համայնքի կողմից բարձրաձայնված մարտահրավերները ներառում են.

[ii] Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի տվյալների համաձայն՝ 15,932 եզդի կանանցից 1,676-ը չունի տարրական կրթություն, միայն 114-ն ունի նախնական մասնագիտական կրթություն, 221-ը՝ միջին մասնագիտական, իսկ 167-ը՝ բարձրագույն մասնագիտական կրթություն, https://armstat.am/am/?nid=532:

Որակյալ կրթության սահմանափակ հասանելիություն. վերջին տարիների ընթացքում եզդի տղաների և աղջիկների կրթության հասանելիության հարցում գենդերային անհավասարությունը փոխվում է: Ներկայումս եզդի աղջիկները սահմանված տարիքում դպրոց հաճախելու ավելի բարձր ցուցանիշներ ունեն: Այնուամենայնիվ, որակյալ կրթության հասանելիությունը շարունակում է նրանց համար խնդրահարույց մնալ հատկապես լեռնային հատվածներում: Եզդի աղջիկները բախվում են լիարժեք կրթություն ստանալու դժվարությունների. դպրոցում ունենում են լեզվական խոչընդոտներ, գենդերային դերերի և կարծրատիպերի պատճառով հաճախ դպրոց չեն հաճախում, ընտանիքներում և ուսումնական հաստատություններում բախվում են խտրական վերաբերմունքի և չհասկացվածության, որոշ գյուղերում՝ տրանսպորտի հետ կապված խնդիրների, հաճախ էլ ֆինանսական սահմանափակումների, առևանգվելու վախի:

Հնարավորությունների մասին իրազեկվածության բացակայություն. եզդի աղջիկների ու կանանց մեծամասնությունը չի ստանում պետության, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից ընձեռված կրթության հնարավորությունների, կարիերայի աճի մասին տեղեկատվություն, չգիտի մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների մասին, ինչը սրում է սոցիալ-տնտեսական անհավասարությունները և սահմանափակում է նրանց առաջխաղացման և կարիերայի զարգացման ներուժը:

Վաղ ամուսնություններ. եզդիների շրջանում անչափահասների ամուսնության դեպքերը տարեցտարի նվազում են, սակայն այդ պրակտիկան դեռևս շարունակում է բարդ խնդիր մնալ, որը սահմանափակում և զրկում է աղջիկներին ինքնարտահայտման իրավունքից, կրթական և մասնագիտական աճի հնարավորություններից, առաջ է բերում հոգեբանական և ֆիզիկական առողջության խնդիրներ և խտրականության նկատմամբ ավելի խոցելի է դարձնում նրանց՝ սահմանափակելով վերջիններիս մասնակցությունը տնտեսական, քաղաքական և սոցիալական ոլորտներում, նպաստելով գենդերային անհավասարությանը և արական սեռի ներկայացուցիչներից ֆինանսական կախվածությանը:

Խտրականություն և գենդերային կարծրատիպեր. եզդի աղջիկներն ու կանայք խտրականության են ենթարկվում ինչպես կրոնական, մշակութային, այնպես էլ գենդերային հիմքով, ինչպես եզդիական համայնքում, այնպես էլ հայ հասարակության շրջանում: Համայնքում առկա է մշակութային կախվածության հայեցակարգը, երբ կանայք չեն կարողանում ձեռքբերումներ ունենալ և հաջողության հասնել, քանի որ կին-տղամարդ հարաբերություններում գերիշխող է տղամարդու դերը: Գենդերային կարծրատիպերը սահմանափակում են եզդի կանանց դերերն ու հնարավորությունները, հատկապես հասարակական կյանքում:

Սոցիալ-տնտեսական խոչընդոտներ. ֆինանսական կախվածությունը և արմատացած համոզմունքները նպաստում են, որ շատ եզդի կանայք գործունեություն ծավալեն միայն կենցաղում՝ սահմանափակելով նրանց ֆինանսական անկախությունը և մասնագիտական աճը: Գյուղատնտեսության և անասնաբուծության ոլորտներում աշխատանքից դուրս գալը և պետական հաստատություններում աշխատանքի անցնելը կին եզդիների համար մարտահրավերային է՝ ելնելով իրենց գենդերային դերերից, տնից հեռու աշխատող կանանց նկատմամբ կարծրատիպերից, ցածր կրթական մակարդակից, սահմանափակ մասնագիտական վերապատրաստման հնարավորություններից: Սրան նպաստում է նաև այն, որ Հայաստանում ներկայումս գոյություն չունի իրավիճակի մոնիտորինգի և ազգային փոքրամասնությունների կանանց կարիքներին համապատասխան հանրային հատկացումներ անելու համակարգ՝ նրանց տնտեսապես աջակցելու համար:

Մշակույթի պահպանման և մարդու իրավունքների միջև անհավասարակշռություն. ավանդույթների պահպանումը մարդու իրավունքների խթանման հետ հավասարակշռելը մարտահրավեր է համայնքի շրջանում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է կրթության իրավունքին: Համայնքում առաջնահերթությունը տրվում է ավանդույթների և սովորույթների պահպանմանը, ինչը հաճախ հանգեցնում է կանանց և երեխաների իրավունքների ոչ լիարժեք իրացմանը:

Սահմանափակ տեսանելիություն և ներկայացվածություն. եզդի կանայք հաճախ թերներկայացված են լրատվամիջոցներում և հանրային քննարկումների ժամանակ, ինչը նպաստում է նրանց մարգինալացմանը և խոչընդոտում նրանց առաջխաղացմանն ու ներառմանը: Եզդի աղջիկների և կանանց ձեռքբերումների ու հաջողությունների մասին հազվադեպ կարելի է տեղեկանալ ավանդական և սոցիալական մեդիա հարթակների միջոցով: Դերային մոդելների և հաջողության պատմությունների բացակայությունը նպաստում է գենդերային կարծրատիպերի վերարտադրությանը՝ հանգեցնելով հասարակական կյանքից եզդի կանանց բացառմանը:

ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հայաստանում եզդի աղջիկների և կանանց առջև ծառացած բարդ մարտահրավերների լուծումը պահանջում է համապարփակ և ինտեգրված մոտեցում: Հիմնական քայլերը ներառում են.

Կրթության և մասնակցության խթանում. ուսումնական հաստատությունները կարևոր դեր են խաղում հասարակական նորմերը վիճարկելու գործում՝ խթանելով գենդերային հավասարությունը, բարձրացնելով խտրական պրակտիկաների մասին իրազեկվածությունը և ապահովելով ներառական միջավայր, որտեղ եզդի աղջիկներն ու կանայք կարող են վստահություն ձեռք բերել, զարգացնել քաղաքացիական և հասարակական կյանքում ակտիվորեն ներգրավվելու իրենց հմտությունները: Առաջնահերթություն տալով ներառական կրթությանը և լուծելով համակարգային խոչընդոտները՝ կրթական հաստատությունները կարող են զգալիորեն նպաստել գենդերային կարծրատիպերի դեմ պայքարին և եզդի աղջիկների հզորացմանը: Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է եզդիաբնակ գյուղերում զարգացնել որակյալ և հասանելի նախադպրոցական համակարգ՝ ապահովելու եզդի երեխաների դպրոց հաճախելու և կրթությունը շարունակելու ցանկությունը, հետազոտություններ անցկացնել՝ հասկանալու եզդի աղջիկների՝ դպրոցից դուրս մնալու հիմնական պատճառները, բարձրացնել պատասխանատվության մակարդակը պարտադիր կրթությունից դուրս մնացած եզդի երեխաների բացահայտման և ուղղորդման համար, վերապատրաստել եզդիերեն լեզվի ուսուցիչներին՝ լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու համար, ընդլայնել կրթական հնարավորությունները մշակութային առումով զգայուն ուսումնական ծրագրերի և լեզվի ուսուցման ծրագրերի միջոցով: Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել իրազեկման արշավներ, որոնք ուղղված կլինեն խտրականության դեմ պայքարին, իրավունքներին և ազատություններին առնչվող ՀՀ օրենքների և միջազգային պարտավորությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը՝ եզդի աղջիկներին հնարավորություն ընձեռելով ծանոթանալ որոշումների կայացման գործընթացներին և անհրաժեշտության դեպքում իրացնել իրենց իրավունքները:

Վաղ ամուսնությունների կանխարգելում. ամուսնության նվազագույն տարիքը մինչև 18

տարեկան բարձրացնելու մասին օրենքի ընդունումը, որը զուգորդված կլինի կանխարգելիչ միջոցառումներով, դպրոցներում խորհրդատվական և աջակցության խմբերի ձևավորումը և համապատասխան ծառայությունների մատուցումը, համայնքային կրթական ծրագրերի իրականացումը, վերարտադրողական առողջության, մոր, նորածնի և երեխաների առողջության վերաբերյալ եզդիների իրազեկվածության մակարդակի բարձրացումը կարևոր դեր ունեն հարկադիր ամուսնությունների կանխարգելման և ռիսկային խմբում գտնվող աղջիկների պաշտպանության հարցում: Պետական մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և համայնքային նախաձեռնությունների միջև համագործակցության շնորհիվ հնարավոր է ստեղծել աջակցության ցանց՝ համապարփակ օգնություն տրամադրելով ռիսկային և խոցելի խմբում գտնվող եզդի աղջիկներին և աջակցելով նրանց ինքնուրույն որոշումներ կայացնել իրենց կրթության, մասնագիտության և անձնական կյանքի վերաբերյալ:

Սոցիալական նորմերի փոփոխություն. սոցիալական նորմերի փոփոխությունը պահանջում է շահագրգիռ կողմերի և ոլորտների միջև երկխոսության և ներգրավվածության խթանում: Անհրաժեշտ է համագործակցության ուղիներ գտնել եզդի կանանց, համայնքի կրոնական առաջնորդների և իրավապաշտպան կազմակերպությունների միջև՝ ավանդույթների պահպանման և մարդու իրավունքների պաշտպանության միջև հավասարակշռություն ունենալու համար: Մշակութային զգայունության վերաբերյալ վերապատրաստման դասընթացների և իրազեկման արշավների իրականացումը, որն ուղղված կլինի շահագրգիռ կողմերի (ինչպիսիք են կրթության, առողջապահության ոլորտի մասնագետները, իրավապահ մարմինները) իրազեկվացության բարձրացմանը, կարող է նպաստել կարծրատիպերի կոտրմանը և՛ եզդի կանանց, և՛ հասարակության շրջանում՝ միաժամանակ խթանելով ներառական միջավայրի ստեղծումը, հարգանքն ու հանդուրժողականությունը մշակութային բազմազանության նկատմամբ: Առաջնային է նաև ներառական մշակութային պրակտիկաների խթանումը, որոնք կհամապատասխանեն մարդու իրավունքների և գենդերային հավասարության սկզբունքներին՝ պահպանելով եզդիական համայնքի ավանդույթներն ու մշակութային ժառանգությունը: Բացի այդ, եզդի կանանց ձայնը և փորձառությունը լսելի ու տեսանելի դարձնելը մեդիա արշավների, տարբեր նախաձեռնությունների, համայնքի կողմից ղեկավարվող ծրագրերի միջոցով, որոնք կընդգծեն նրանց ձեռքբերումներն ու ներդրումը հասարակական կյանքում, կարող է խթանել համայնքի կանանց տեսանելիությունը և մասնագիտական ձգտումները:

Եզդի աղջիկների և կանանց հզորացում. ՔՀԿ-ների, պետական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվում են կարողությունների զարգացման և վերապատրաստման մի շարք ծրագրեր՝ խթանելու աղջիկների և կանանց մասնակցությունը քաղաքացիական և քաղաքական կյանքում. այս նախաձեռնությունները կարող են ադապտացվել՝ զարգացնելու եզդի աղջիկների և կանանց շահերի պաշտպանության վերաբերյալ գիտելիքները և առաջնորդության հմտությունները, աջակցելու նրանց՝ կրթությունը շարունակելու և հաջողության հասնելու ձգտմանը: Եզդի աղջիկների և կանանց կարիքներին ուղղված իրազեկման ծրագրերը և տեղեկատվական արշավները էական նշանակություն ունեն առկա հնարավորությունների մասին տեղեկանալու և դրանցից օգտվելու հարցում, որն էլ կօգնի նրանց հասնել իրենց մասնագիտական ձգտումներին և նպատակների իրականացմանը: Կարևոր է մեծացնել եզդի երեխաների մասնակցությունը երեխաներին առնչվող որոշումների կայացման գործընթացներին, նախաձեռնել դեռահաս աղջիկների կարողությունների զարգացման ծրագրեր, որպեսզի աղջիկները դպրոց հաճախելիս կամ համայնքային միջոցառումների ժամանակ ավելի ինքնավստահ լինեն: Եզդի աղջիկներին և կանանց աջակցելը ենթադրում է մասնագիտական ուսուցման ծրագրերի,

ֆինանսական ռեսուրսների և եզդիաբնակ գյուղերում ենթակառուցվածքների (մասնավորապես՝ տրանսպորտի) հասանելիության ընդլայնում: Ավելին, կարևոր է ապահովել տարբեր հնարավորությունների և ռեսուրսների հասանելիությունը եզդի կանանց համար, ռեսուրսների պլանավորումը պետք է ուղեկցվի դրանց հավասարաչափ և նպատակային բաշխումով: Պետք է ջանքեր գործադրվեն մասնագիտական վերապատրաստման և հմտությունների զարգացման, ձեռներեցության աջակցության և աշխատանքի տեղավորման հնարավորություններ ապահովելու համար:

Ըստ էության, այս միջամտությունների իրականացման և նշված ոլորտներում համագործակցության ընդլայնման միջոցով կարելի է խթանել եզդի աղջիկների և կանանց մասնակցությունը քաղաքացիական կյանքում և որոշումների կայացման գործընթացներում՝ նպաստելով ավելի հավասար և ներառական հասարակության ձևավորմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում եզդի կանանց հզորացման համար պահանջվում է պետական կառույցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, լրատվամիջոցների, միջազգային գործընկերների և հենց եզդիական համայնքի ջանքերի համախմբում և համագործակցության շրջանակի ընդլայնում:

Մեր առաջարկներն են.

- Վեր հանել սոցիալական, տնտեսական և կառուցվածքային խնդիրները, որոնք խոչընդոտում են եզդի աղջիկների և կանանց լիարժեք մասնակցությանը և ներկայացվածությանը որոշումների կայացման գործում: (Առավել համապատասխան է կառավարության և ՔՀԿ-ների համար)
- Ջանքեր ներդնել կրթության և մասնագիտական վերապատրաստման ոլորտում գենդերային բաղադրիչը տարանջատող տվյալների հավաքագրման և վերլուծության համար՝ ավելի լավ հասկանալու եզդի աղջիկների և կանանց փորձառությունն ու կարիքները, իրականացնելով փաստերի և կարիքների վրա հիմնված ծրագրային պլանավորում: (Առավել համապատասխան է կառավարության և ՔՀԿ-ների համար)
- Ներդրումներ կատարել կրթական և իրազեկվածության բարձրացման ծրագրերի իրականացման համար, որոնք կբավարարեն եզդի աղջիկների և կանանց կարիքները և կնպաստեն նրանց հզորացմանը: (Առավել համապատասխան է կառավարության, մասնավոր հատվածի և ՔՀԿ-ների համար)
- Իրականացնել կարողությունների զարգացման ծրագրեր, որոնք ուղղված կլինեն նպաստելու եզդի աղջիկների և կանանց առաջնորդության հմտությունները, գիտելիքները և փորձը՝ քաղաքական և հասարակական հաստատություններին ավելի հաշվետու, ներառական և զգայուն դարձնելու համար: (Առավել համապատասխան է կառավարության և ՔՀԿ-ների համար)
- Ամրապնդել իրավական դաշտը՝ կատարելով համապատասխան օրենսդրական բարելավումներ և բարեփոխումներ, ներառյալ՝ ամուսնության տարիքային շեմի բարձրացումը, «ազգային փոքրամասնություն» հասկացության սահմանումը, հակախտրականության օրենքի ընդունումը՝ եզդի աղջիկների և կանանց իրավունքների

պաշտպանությունը խթանելու համար: (Առավել համապատասխան է կառավարության համար)

- Բարձրացնել ղեկավար դերերում և հասարակական կյանքում հաջողություններ գրանցած եզդի կանանց և աղջիկների տեսանելիությունը: (Առավել համապատասխան է լրատվամիջոցների համար)
- Աջակցել համայնքի կողմից ղեկավարվող նախաձեռնություններին, որոնք խթանում են գենդերային հավասարությունը, վիճարկում վնասակար կարծրատիպերը և զորացնում եզդի աղջիկներին և կանանց՝ պաշտպանելու իրենց իրավունքները: (Առավել համապատասխան է կառավարության, մասնավոր հատվածի, միջազգային գործընկերների և ՔՀԿ-ների համար)
- Համագործակցել եզդի տղամարդկանց և կրոնական առաջնորդների հետ՝ խթանելու այնպիսի մշակութային պրակտիկաները, որոնք համապատասխանում են մարդու իրավունքների և գենդերային հավասարության սկզբունքներին: (Առավել համապատասխան է կառավարության, ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար)
- Համագործակցել միջազգային կազմակերպությունների և գործընկերների հետ՝ Հայաստանում եզդի կանանց հզորացմանն աջակցելու համար ռեսուրսներ ներգրավելու և միջազգային լավագույն փորձառությունն օգտագործելու նպատակով: (Առավել համապատասխան է կառավարության և ՔՀԿ-ների համար)

Հետևելով այս առաջարկություններին՝ մենք կարող ենք առաջ մղել ՀՀ հանձնառությունը հասնելու գենդերային հավասարության և մարդու իրավունքների պաշտպանության՝ ապահովելով, որ եզդի աղջիկներն ու կանայք ունենան հավասար հնարավորություններ՝ մասնակցելու որոշումների կայացման գործընթացներին և նպաստելու ՀՀ-ում ժողովրդավարական զարգացմանը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Կարևոր է ընդգծել, որ սույն համառոտագրի վերջնական նպատակը միայն քաղաքականության և որոշումների կայացման մեջ եզդի կանանց ներկայացվածության մակարդակի խթանումը չէ: Մեր նպատակը նրանց հզորացնելն է՝ զարգացնելով գենդերային մարտահրավերների, խտրականության և հասարակական նորմերի դեմ պայքարելու իրենց կարողությունները: Հզորացումը ներառում է համայնքի աղջիկների և կանանց իրավասություն՝ արդյունավետորեն մասնակցելու հասարակական կյանքին, ներգրավվելու իրենց կյանքի վրա ազդող պետական քաղաքականության և որոշումների կայացման գործընթացներում, ինչպես նաև նպաստելու գենդերային հավասարությանը, հասարակության շրջանում ներառականությանը և սոցիալական առաջընթացին: Մենք ձգտում ենք, որ քաղաքականություն և որոշումներ կայացնողները ակտիվորեն աջակցեն այն նախաձեռնություններին, որոնք խթանում են եզդի աղջիկների և կանանց քաղաքացիական մասնակցությունը և ղեկավար դերերում որոշումներ կայացնելու լիազորությունը: Դրանով մտադրված ենք նպաստել այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ նրանց ձայնը ոչ միայն լսելի, այլև ազդեցիկ կլինի քաղաքականության ուղղությունների ձևավորման գործում՝ խթանելով գենդերային հավասարությունը և ներառական հասարակության զարգացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, 2011 թ. մարդահամարի արդյունքներ, https://armstat.am/am/?nid=532:
[2] UN Treaty Body Database, https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Treaty.aspx?CountryID=8&Lang=en:
[3] ՕքսԵՋԵՆ հիմնադրամ (2020 թ.), Հայաստանում Պեկինի հռչակագրի և գործողությունների ծրագրի իրականացման վերլուծություն, https://oxygen.org.am/wp-content/uploads/2020/07/Beijing25_analysis-of-3-areas-of-concern_ENG.pdf:
[4] coe.int, Եվրոպայի խորհրդի գործունեությունը Հայաստանում, https://www.coe.int/en/web/portal/armenia:
[5] ec.europa.eu (2021), Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/ip_21_782:
[6] arlis.am, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 06.12.2015 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510:
[7] e-draft.am (2024 թ.), «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/en/projects/6821?fbclid=IwAR0GrHMH_ne19aUtfVIg6xKs4qrOwsbJOu4g5vtOPwjjEnxTGJ_jI09e4F4:
[8] gov.am. (2006 թ.), Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե, Հայաստանի վերաբերյալ 2-րդ կարծիք, հակիրճ ամփոփում, https://www.gov.am/u_files/file/kron/2d%20Komiteji%20kartsiqy%20hajeren%202006.pdf:
[9] Եվրասիա համագործակցություն հիմնադրամ (2022 թ.), Հայաստանում եզդիական համայնքում վաղ ամուսնությունների և պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնախնդիրները, https://epfarmenia.am/sites/default/files/Document/Problems_of_Early_Marriage_and_School_Dropout_in_the_Yezidi_Community_2022_Armenian.pdf: